

Գ Լ Ո Ւ Խ Ե Ն Ե Բ Կ Ը Ր Ո Ր Դ

Պ Ա Ր Զ Պ Ա Ր Ա Ձ Ե Վ Ե Ր

ՈՏ ԽԱՂԱՅՆԵԼՈՎ, ՈՏ ԶԱՐԿԵԼՈՎ ՈՒ
ԹՈՒՉՔՆԵՐՈՎ ՊԱՐԵՐ

Պարերում մարմնի ծանրությունը մի ոտքից մյուսին անցնում է քայլի, թռիչքի նյա՝ տեղում ոտքից ոտք փոխանցելու օգնությամբ: Մարմնի ծանրությունից ազատ ոտքը լինում է թույլ և ազատ, իսկ ծանրությունը կրողը համարվում է ուժեղ:

Պարերում մարմնի ծանրությունն հաճախ է տեղում ոտքից ոտք փոխադրվում: Այդ շարժման ժամանակ հարթության վրա տեղափոխություն չի կատարվում: Շարժումը կոչվում է մարմնի ծանրության անդամախառնում, որը ընդհանրում է ուժեղ ոտքի դիրքը: Մարմնի ծանրության տեղափոխություն ժամանակ ազատ ոտքը կարող է կատարել տարբեր շարժումներ: Այս պարային հասուն և ինքնուրույն շարժումը հայկական պարերում ոտացել է խաղացող ռա անունը:

Խաղացող ռաի շարժումները ենթաբերվում են հատուկ ավանդական օրենքների:

Ու խաղացնելը օդում և հարթության վրա լինում է արբեր: Օդում խաղում է ձգած կամ ծալած ծնկով, հարթության վրա՝ մատներով, կրունկով կամ ամբողջ տապանով (թույլ կամ ուժեղ զարկելով) ուժեղ ոտքից արբեր հեռավորությունը ու մատների տարբեր ուղղությամբ:

Ու խաղացնելը կատարվում է տարբեր ուժերով ու երանդներով:

Խաղացող ռաի շարժումների ժամանակը չի համընկնում ուժեղ ոտքի շարժումների ժամանակին: Նրանք իրարից անկախ են: Խաղացող ռաի ամեն մի շարժում ունի իր տեղությունը՝ ժամանակը:

Ուժեղ ոտքն հաճախ արձագանքում է թույլ ոտքի շարժումներին՝ ծունկը կոտրելով: Ծունկ-կոտրուկները կարող են լինել թե՛ ոտքը խաղաց-

նելու և թե՛ քայլի ժամանակ, որոնք և լինում են տարբեր խորության ու տարբեր ուժերով:

Ամենահաճախ հանդիպում են մեկ, մեկ ութերորդական ¹/₈ մեկ, մեկ տասնվեցերորդական ¹/₂₆ մեկի ծալում և ուղղում:

Հանդիպում են տարբեր խորության ծունկ կոտրուկներ և տարբեր կամ հավասար ծունկ կոտրուկների համակցություններ, ապա ծնկի խորը ծալում և ուղղում:

Ոտքը խաղացնելու և ծունկը կոտրելու ձևից որոշակիորեն փոխվում է ամբողջ պարային ֆիգուրան, պարաձևի ընդլայնում և բովանդակությունը, ապա և արբեր երանդներ ստանում:

Պարերը և նրանց մասերը իրենց կատարման ակնյայտ անսակետից բաժանվում են դանդաղ, միջին և արագ մասերի:

Դանդաղ մասերը խիստ որոշակի պարաձևեր են ունենում, իսկ միջին և արագ մասերում հաճախ կատարման տեմպի պատճառով, խաղացած ոտքի շարժման ընթացքում, ուժեղ ոտքը ծունկը կոտրելու փոխարեն կատարում է թռիչքներ (տեղում, աշ ու ձախ կամ առաջ ու ետ): Թռիչքները բազմազան են՝ մի ոտքից երկուսին, երկուսից՝ մեկին, երկուսից՝ երկուսին և մեկից մյուսին (աշ ոտքից ձախին կամ՝ հակառակը):

Ուժեղ ոտքը պարի տեմպի արագացման ժամանակ, միջին ու արագ մասերում շարունակում է՝ ծունկ կոտրել, բարձրանալ մատներին ու կրտ-

¹ Ծունկ կոտրել կամ ծունկ ծալել նշանակում է ոտքը տարբեր խորությամբ, զսպանակաձև ծալել ու ձգել: Հայկական պարերում ուժեղ ոտքը երբեք ձգած չի լինում: Այն միշտ մի փոքր կոտրում են, որի համար ասում են ծունկ կոտրել: Խորը կոտրուկներին ասում են ծունկը ծալել:

րուկ իջնել կրունկներին այնքան անգամ, որքան անգամ դանդաղ մասում ծունկ էր կոտրում: Կարող է նաև թռչել ուժեղ ոտքին այնքան անգամ, որքան անգամ դանդաղ մասում ծունկ էր կոտրում:

Հարթության վրա տեղափոխության ուղղութիւնը որոշվում է խաղացող ռաի քայլերով, որովհետև թույլ ու ազատ լինելով է միայն, որ ոտքը կարող է քայլ կատարել: Եթե հարթության վրա պարաշարքի անդափոխությունը պետք է դեպի աջ լինի, ապա ծանրությունից աղաւթվում է աջ ոտքը, իսկ լթե ձախ, ապա ձախ ոտքը:

Ջավախքում ռա խաղացնելով պարերը հիմնականում պաակտում են Մէ վոզի, էրկու վոզի, Իրէֆ վոզի, և Ջօրս վոզի պարաձևերին:

Մէ վոզի և էրկու վոզի պարաձևերում հարթության վրա տեղափոխությունը կատարվում է ռա խաղացնելու օգնությամբ, իսկ Իրէֆ վոզի, և Ջօրս վոզի պարաձևերում՝ ոտքը ղարկում են երեք, չորս անգամ. այստեղից էլ պարերը բաժանում ենք ռա խաղացնելով և ռա ղարկելով պարաձևերի:

1. Մէ վոզի. ԵՐԿՈՒԱ ԳՆԱԼ, ՄԵԿ ԴԱՌՆԱԼ

Մէ վոզի՝ պարերը երկու գնալ մեկ դադանալ են՝ տեղի ընկածով էրգուս մէ դիւ, մէգը մէ դիւ, կամ էրգուս սաղիւ, մէգը մէգիւ: Մէ վոզի պարերին հաճախ տալիս են Ղի-Ղի կամ Ղիդի՝ անունը:

Որոշ գյուղերում Մէ վոզի անունը կրող պարերը ունեն մէգը մէգուս, մէգը մէգուս, որը հաճախ փոխարինվում է մեկը աջ, մյուսը ձախ գնացող քայլերով: Պարաձևն հիմնականում կազմվում է մարմնի ծանրությունից ազաւթած ոտքը գետնին կամ օդում խաղացնելով: Այսպիսի մի պար, գրանցված Գանձա և Մալկա գյուղերում, կոչվում է Թւֆ վոզի: Թւֆ վոզի-ը կատարում են խառը՝ տղամարդիկ ու կանայք միասին: Ձեռքերը ընկած են ուս-ուսի, արմունկները դուրս կատեզի մակարդակին: Տեմպը դանդաղ է, ռիթմը հավասարաչափ: Պարեղանակը $\frac{2}{4}$ է: Պարային ֆիգուրան զրաղեցնում է երաժշտական մեկ տակտ: Յուրաքանչյուր քայլ տևում է 8 չայ-

սինքն մեկ ութերորդական քայլ և մեկ ութերորդական դադար: Պարային քայլերն են՝

1-ին՝ աջ ոտքով քայլ դեպի աջ, երկրորդ դիրքով,


2-ին՝ ձախ թաթի մատները խաղացնել աջի մատների մոտ, թաթը դնելով դեպի ներս 45° թեքությամբ.

3-ին՝ ձախ ոտքը դնել աջի կողքին, վեցերորդ դիրքով.

4-ին՝ աջ թաթի մատները խաղացնել ձախի մատների մոտ, ձիշտ այնպես, ինչպես 2-ին:

Պարի ընդհանուր հաշիվներին ուժեղ ոտքով կատար-

ել մեկ ծուկկաւորով  7, Գրեթե նույն պարաձևն ունի Ախալքալաքի և Ախալցխայի շրջաններում գրանցած Քօթաւա՞ պարը: Հարսանիքներին, քիչ քանակ կամ կիրակնօրյա պարերի ժամանակ, երբ պարատեղը կըսըլայթուս, Քօթաւանէ կըխաղային. որովհետև այն հնարավորություն էր տալիս պարի շրջանի մեջ ավելի շատ մարդ ընդգրկելու: Այստեղ ձեռքերը բռնում են թէվկախ, ափ-ափի, ուսերով իրար սեղմված: Շրջանն անպայման փակում են: Պարում են երկար, առանց ընդմիջումների՝ Մ. Սամսարում ոտքը խաղացնելու փոխարեն 2 և 4 հաշիվներին ամրոշ թաթով թույլ զարկում են գետնին (նույն տեղում): Պարի կենսա՝ 1 և 3 հաշիվներին կատարել մեկ մեծ, իսկ շուրջ հաշիվներին երկու

փոքր ծուկկաւորով 

Մէ վոզի պարերի խմբին է պատկանում նաև Ախալցխայի շրջանի Սուղրուտ գյուղում Գ. Ինշոյանից գրանցած Թըփ մաղաղա՞ պարը, որն իր ձևով Քօթաւայի կրկնօրինակն է:

Քօթաւա և Մէ վոզի անունը կրող մի քանի պարեր իրենց ձևով ասարեքվում են նախորդներին: Եթե հիմք ընդունենք այն սահմանումը, թե յէփ օր սօնը անգամըմ զարգէնէ գէղին, կասէնէ

Քօթաւա—ասացողները չկարողացան բացատրել. հավանաբար կապված է քօթ բառարմատի հետ. զուցե և քօթալ, որը նշանակում է հարու տալ. ԲՀԲԲ, էջ 582:

7 Սլաւեր—նեղ:

Քօթաւա պարը գրանցել եմ Կարծախում՝ Վ. Տեր-Սիմոնյանից, Ալաստանում՝ Հ. Մածուրյանից, Մ. Սամսարում՝ Գ. Խաչատրյանից, Գ. Կակոսյանից և ուրիշներից:

Թըփ մաղաղա—մաղաղա արար. magaza ապրանքներ պահելու նկուղ, պահեստ (որպիսին կարող է լինել և քարայրը), կամ մաղաղա արար. magara—քարայր ՄՀԲԲ, էջ 243: Հնում քարայրներն էլ են պարասեղ եղել: Մ. Սամսարի մոտ մինչև հիմա մի քարայր կա, որտեղ առաջներում պարել են: Այս պարում են նրա առաջ ընթաց ասարածության վրա:

2 Մէ վոզի—մի քայլ—այսանդ կենս իմաստով:

3 Տերմինը Սրբուհի Լիսիցյանից. անս նշվ. աշխ., հ. 1, էջ 169:

4 Ղի-զի կամ ղիդի—թաթ-թաթ, մեկ-մեկ, նորից կենսի իմաստն է:

5 Թւֆ—մի, կենս, նորից մեկ ոտք, մեկ քայլ իմաստն ունի:

մէ վօղկ պար կրխադաճ¹⁰, ապա այս Մէ վօղկը պարաձևի համար կդառնա հիմնական ձև: Պարում են խառը, ումուզ-ումուզի կամ թէվկախ, ամփ-ամփի:

Այս պարերում եղանակի շափը $\frac{2}{4}$ է. ամեն մի քայլ տևում է $\frac{2}{4}$: Պարային ամբողջ ֆիգուրան զբաղեցնում է երաժշտական չորս տակտ 8: Ռիթմն հավասարաչափ է, տեմպը դանդաղ: Մ. Սամսարի Մ, վօղկ-ում¹¹ պարային քայլերն ալապիսին են՝

1-ին՝ աջ թաթով քայլ դեպի աջ, երկրորդ դիրքով. «և»-ին՝ ձախ ոտքը խաղացնել օդում, գետնից քիչ բարձրացնելով:

2-ին՝ ձախով քայլ դեպի ձախ, երկրորդ դիրքով. «և»-ին՝ աջ ոտքը խաղացնել ձախի նման:

3-ին՝ կրկնել 1-ի քայլը:

«և»-ին խաղացնել ձախ ոտքը:

4-ին՝ ձախ ոտքի ամբողջ թաթով շեշտված դարկել աջ թաթից կես թաթ առաջ:

«և»-ին՝ ձախ թաթը դարկած տեղից դեպի առաջ սահեցնելով, ծնկի փոքր ծալումով թաթը բարձրացնել մինչև աջ ոտքի ծնկի մակարդակը:

5-ին՝ ձախ թաթով քայլ դեպի ձախ, երկրորդ դիրքով:

«և»-ին՝ աջը խաղացնել գետնից քիչ բարձրացնելով:

6-ին՝ աջ թաթով քայլ դեպի առաջ, երկրորդ դիրքից կես թաթ լայն:

«և»-ին՝ խաղացնել ձախ ոտքը:

7-ին՝ ձախ թաթով քայլ դեպի ձախ, երկրորդ դիրքով:

«և»-ին՝ խաղացնել ձախ ոտքը:

8-ին՝ աջ ամբողջ թաթով շեշտված դարկել գետնին ձախից կես թաթ առաջ:

«և»-ին՝ աջ, դարկած ոտքը տեղից սահեցնելով բարձրացնել վեր, ճիշտ այնպես, ինչպես 4 (և) հաշվին ձախ ոտքը:

Մ. Սամսարի մի ուրիշ տարբերակում նույն տեղնուտեղը քայլերը սկսվում են ձախ ոտքից, իսկ 4, «և», 8, «և» հաշիվներին մեկի փոխարեն գետնին դարկում են երկու անգամ (առաջինն ու ժեդ, երկրորդը թույլ): Պարի թվական հաշիվներին ձեռքերով կատարել դեպի ետ 25° , իսկ «և»-երին դեպի առաջ 45° , ետ ու առաջ շարժում:

Պարի բոլոր թվական ու «և» հաշիվներին կա-

տարել մեկ ծունկկոտում (ծունկը ծալել և ուղղել):

Ալաստան գյուղում Ս. Դուդուկչյանից դրանցած թափ վօղկ-ը սովորական երկուս գնալ մեկ դառնալ է: Այն ունի երկու մաս. դանդաղ՝ ծանդ և արագ՝ թեթև: Պարում են խառը: Ձեռքերը թեփվելի: Տևման առաջին մասում դանդաղ, երկրորդում արագ՝ թուխքներով: Ռիթմը հավասարաչափ է: Եղանակը $\frac{2}{4}$ է, պարային ֆիգուրան զբաղեցնում է երաժշտական երեք տակտ, 6: Պարային քայլերն են՝

1-ին՝ աջ թաթով քայլ դեպի աջ՝ երկրորդ դիրքով:

2-ին՝ ձախով քայլ-միացում, վեցերորդ դիրքով:

3-ին՝ կրկնել 1-ի քայլը:

4-ին՝ ձախ ամբողջ թաթով զարկել աջի մատներին մոտ, թաթը դնելով դեպի ներս 45° թեքությամբ:

5-ին՝ ձախով քայլ դեպի ձախ, երկրորդ դիրքով:

6-ին՝ աջ թաթը խաղացնել ձախի կողքին, վեցերորդ դիրքով:

Ամեն հաշվում ուժեղ ոտքով՝ կատարել

երեք ծունկկոտում 

Օրկերորդ մասի թուխքներով պարաձևը վեր-վերի է¹²:

1-ին՝ թուխք դեպի աջ, աջ թաթին (jete) երկրորդ դիրքից լայն:

«և», «և»-ին՝ երկու թուխք դեպի աջ երկու թաթերի մատներին (soutés).

2-ին՝ թուխք դեպի ձախ թաթին (jete).

«և», «և»-ին՝ երկու թուխք դեպի աջ երկու թաթերի մատներին (soutés):

3, «և», «և»-ին՝ կրկնել 1, «և», «և»-ի թուխքները:

4-ին՝ թուխք անդում (jete) աջ թաթի մատներին միաժամանակ ձախ ամբողջ թաթով զարկելով դեպի ներս:

«և», «և»-ին՝ երկու թուխք դեպի աջ, աջ թաթին (soutés).

5-ին՝ թուխք դեպի աջ, աջ թաթին:

«և», «և»-ին՝ երկու փոքր թուխք դեպի ձախ, ձախ թաթին:

6-ին՝ թուխք դեպի աջ, աջ թաթին (jete) երկրորդ դիրքից լայն:

«և», «և»-ին՝ երկու թուխք դեպի աջ (soutés) երկու թաթերի մատներին: Այս մասում ռիթմը դառնում է անհավասարաչափ: Թափ վօղկ

¹⁰ Ախալքալաք՝ 2. Դավթյան, Շ. Պողոսյան:

¹¹ Մ. Սամսար՝ Դ. Դավթյան, Մ. Ալազյան:

¹² Պարաձևի տեղիքը Սրբուհի Լիսիցյանից. տե՛ս նշվ. աշխ., հ. 1, էջ 361:

պարի առաջին մասի ձևով են կատարվում բըփ մաղաղան-ը՝ Մուղրուաում¹³ և Շախկու-րին¹⁴ կարծախում: Տարրերությունը միայն նրանում է, որ ամեն մի քայլին ուժեղ ուժը կատարում է ոչ թե երեք, այլ մեկ ծունկ-կառույցի շնորհիվ: Պարային ֆիգուրան զբաղեցնում է երեք երաժշտական $\frac{2}{4}$ տակտ,

8 ♩ :

Այսպես, Մ. Մաժուրյանից գրանցած Մէլօղի պարը համապատասխանում է Չոքս վօղի պարաձևին. ենթադրում ենք, որ Հ. Մաժուրյանը շփոթել է պարաձևի անունը:

2. ԵՐԿՈՒ ՎՕԴԿ. ԵՐԿՈՒՄ ԳՆԱԼ, ԵՐԿՈՒՄ ԴԱՌՆԱԼ

Ջավախքում ամենասիրված ու տարածված պարաձևը Երկու մօղի է. այսինքն՝ երկուս գնալ, երկուս դառնալ¹⁵ անհավան բարրառով էրգուս մէ դին, էրգուս մէ դին. էրգուս մէ տուն, էրգուս մէ տուն. էրգուս սադին, էրգուս սոլին: Կատարում են հասարակական պարերի և հարսանիքների ժամանակ: Ավելի չաա պարում են երգելով, քան նվագելով: Երգում են ղուլդ-ղուլդ, էրգու մանչ կամ աղջիկ կասէն¹⁶, էրգուսը կրգարձնէն: Պատահում է, որ մեկը երգում է, մյուսը պատասխանում:

Երբեմն երգում են ընդհանր միասին:

Ջավախքում երգվող քառյակները կոչվում են մանի¹⁷-ներ: Մանի-ասել նշանակում է և երգելով մրցել, որի ընթացքում տղաներն ու աղջիկները ցուցադրում են իրենց շնորհքը, սրամատությունն ու իմացությունը: Երգելու ժամանակ հորինվում են նոր քառյակներ կամ ժամանակին ու անդին համապատասխան հարմարեցվում հները:

Երկուս գնալ, երկուս դառնալ պարաձևն հիմնականում այսպիսին է՝

1-ին՝ աջ թաթով քայլ դեպի աջ, երկրորդ դիրքով.

2-ին՝ ձախով քայլ-միացում, վեցերորդ դիրքով.

3-ին՝ կրկնել 1-ի քայլը.

4-ին՝ ձախ թաթի մատները խաղացնել աջի կող-

քին, վեցերորդ դիրքով, կամ խաղացնել օդում, դեռնից քիչ բարձրացնելով.

5-ին՝ ձախ թաթով քայլ դեպի ձախ, կես թաթ հեռավորությամբ.

6-ին՝ աջ թաթով քայլ-միացում.

7-ին՝ կրկնել 5-ի քայլը.

8-ին՝ աջ թաթի խաղացնել այնպես, ինչպես 4-ին ձախի:

Այս պարաձևով կատարվում են հետևյալ պարերը՝ Յաթո ջան, Մաթալօ, Կրուունկ, Հայաստան, պար՝ Ասլի Քարամից (Կարծախ՝ Վ. Տեր-Մինասյան), Վարդ կօշիգս, Սարգիս ախպեր, Հօղալօ, Ջան մաթալ (Ախալթալա՝ Շ. Մեղոյան), Շիկլըլի, Ղարսա ուղա, էս յանը սար, Քուրդ մըշեցի, Քիշմիբի յար (Մ. Սամսար, Գ. Կակոսյան), Կիլկիլի յար ջան, լյսկւն ու Սէյրան ու յար, Հասա-րակ ֆօշարի (Տիլիսկա Ա. Գոթորյան), Չալ փա-րա (Ալաստան՝ Հ. Մաժուրյան) Ջան մաթալ, Տի-րունի յուբի, Ֆրոիշը (Ալաստան՝ Մ. Մակարյան), Քիւնէգին, Հայկօ ջան (Ալաստան՝ Մ. Սամվելյան), Յիւմն ջան, Մինուրանի ճամբէն օլօր մօլօր է (Մղալթիլա՝ Արրուհի և Մաթրուն Պողոսյաններ), Փսմփուտի, Բաթօլա, Հօլ նար, Իմ չինարի յար ջան և այլ նույնանուն պարեր՝ դրանցված Սուֆ-լիս, Գանձա, Մ. ու Փ. Խանչալլի, Հեշախա, Խանդո և այլ դյուղերում:

Այս պարերի եղանակն հիմնականում $\frac{2}{4}$ է. պարային ֆիգուրան դրաժեցնում է երաժշտական շորս տակտ 8 ♩ : Մունկկոտրուկները երկուսն են

: Ձեռքերը բռնում են քեմլախ՝ ափ-ափի, քեմլեվի՝ ումուգ-ումուգի: Հայաստան և Սարգիս ախպեր պարերում բռնում են իրար գոսկասեղից:

Շալին օղլի (Մուղրուտ՝ Գ. Ինչոյան), Կէգելի, կրնդըլ մընդլ (Ալաստան՝ Ե. Դարբինյան), Աճը մըդալ (Ախալթալա՝ Հ. Վարդանյան), Աջարէստա-նու Խօթօմ (Մուղրուտ՝ Գ. Ինչոյան) պարերը կա-տարում են երկուս գնալ, երկուս դառնալ պարա-ձևի թուխներով:

1-ին՝ թուխ դեպի աջ, աջ թաթին երկրորդ դիր-քից լայն.

2-ին՝ թուխ դեպի աջ, ձախ թաթին (խալաձև).

3-ին՝ կրկնել 1-ի թուխը.

4-ին՝ թուխ տեղում, երկու թաթերի մատներին.

5-ին՝ թուխ դեպի ձախ, ձախ թաթին, երկրորդ դիրքով.

6-ին՝ թուխ տեղում, աջ թաթին.

7-ին՝ թուխ դեպի ձախ, ձախ թաթին, վեցերորդ դիրքով.

8-ին՝ կրկնել 4-ի թուխը.

¹³ Մուղրուտ՝ Գ. Ինչոյան:

¹⁴ Շախկուրի—Շախկուր, շխկ-շխկ ձայն, որ լսվում է առարկաներն իրար խփելուց կամ ծափ տալուց ՄՀԲԲ, էջ 432:

¹⁵ Կարծախ՝ Վ. Տեր-Սիմոնյան:

¹⁶ Ասել—նշանակում է երգել, դարձնել—երգելով պա-տասխանել:

¹⁷ Մանի—առճկ. manı—արեւելյան երաժշտության մեջ մի եղանակի անուն: ՄՀԲԲ, էջ 252: manı—народная песня типа частушки թուրք—ռուս քառաբան, էջ 304:

Պարաձևեր նման է վեր-վերուն.

Աշտարեստանում խոսում պարում ձեռքերը բռնում են փաթտված, ափ-ափի: Այս պարերը կատարելիս, հատկապես դանդաղ մասերում կրեմն գեպի աջ գնացող քայլերի ժամանակ մարմնով շրջվում են դեպի աջ, 45°-ով, իսկ ձախ քայլերի ժամանակ ուղղվում են դեմքով առաջ կամ դեպի ձախ՝ 25°-ով:

Որոշ գյուղերում Մե վոդկ և էրկու վոդկ պարերը կատարում են նաև Ղալալի նվագակցությամբ:

3. Էրկու վոդկ. ՇՈՐՈՐՎԵԼՈՎ ՈՒ ԹԻԻԶՔՆԵՐՈՎ ՊԱՐԵՐ

Ջավախքում էրկու վոդկ պարաձևով են կատարվում նաև Շօրօր վեր-վեր ու Քօշաքի պարերը, որոնք այժմ հաղվադեպ են: Տեղեր կան, որտեղ նույնիսկ չեն հիշում՝ այդպիսի պարեր եղել են, թե՛ ոչ: Ներկայումս կատարում են միայն հեռավոր գյուղերում: Համարում են չընկալ, Արգրեումա էգած պարէր¹⁸: Պարում են հիմնականում հարսանիքների ժամանակ¹⁹, երբ այն մոռանում է իր ավարտին. հաճախ ուղղակի լուսարացին: Սա ևս վկայություն է, որ նշված պարաձևերը հնագույն են:

Ա. ՇՈՐՈՐ

Խաղացող ութի մասին խոսելիս ասացինք, որ բացի մատներն ու կրունկը խաղացնելուց, խաղում են նաև մարդը թաթով: Այս դեպքում փոխվում է ուժեղ ուժը: Մարմնի ծանրությունը կրող ութն աղատվում է, դառնում թույլ, իսկ աղաթ՝ թույլ ուժը, ընդունելով մարմնի ծանրությունը, դառնում է ուժեղ: Սա մարմնի ծանրության տեղափոխություն է, որի ընթացքում իրանը շորորվում է: Այսպիսի քայլերով պարերը կոչվում են Շօրօր-ներ: Հայկական պարերում միայն ծանրությունը անդափոփելով Շօրօր-ները հաղվադեպ են, սակայն կան, և նրանցում անդափոփությունը հստակության վրա կատարվում է մի քանի քայլերի օգնությամբ: Շօրօր²⁰ նշանակում է շորորալ, օրորալ, ինքնադոհ կոտորավել, սեթեթել: Շօրօր ձևի պարային ֆիգուրայում այս ու այն կողմ օրորվելը, շորորվելը չէր կարող կապ չունենալ

նմանողական որոշակի շարժումների հետ, որոնք պեք է արահայտեին ու բնութագրեին բնության այս նմանը այն երևույթը, թուղունների կամ կենդանիների շարժումները: Այժմ, իհարկե, դժվար է ասել, թե ո՞ւմ և ինչին են նմանեցրել պարային ֆիգուրաները կամ քայլերը: Արդյոք նրանք նմանեցրել են հավքերի, կենդանիների, թե՛ ծովի կամ ծառի ճյուղերի շարժումներին: Մի բան պարզ է, որ հնում շաա պարեր նվիրված են եղել համացեղային կերպարներին ու համայնքի տոտեմներին՝ թուղուններին, կենդանիներին, բնության երևույթներին, որովհետև հնուց մշակված են եղել համապատասխան նմանողական շարժումներ, որոնք որոշակիորեն բնորոշել են տվյալ կերպարը: Այս արտահայտչական, նմանողական շարժումներն աստիճանաբար մտել են պարային շարժական հիմնական ֆոնդի կազմի մեջ: Հնարավոր է, որ Շօրօր-ի պարային քայլերը մեղ հասել են հնագույն ժամանակներից, նույնիսկ հայերի նախնիներից: Այդ հաստատվում է հին հայկական պարային կախված անբանով, որը նշանակում է պար: Տեղիների ածանցված ձևերն են կախվել, կախվիչ, կախվումի, կախվաբան բառերը: Կախվել նշանակում է պարել ոչ թե սահելով ու հանդարա շորորվելով, այլ թուղնություն: Պարը է, որ Շօրօր տեղիներ լրիվ չի բնութագրել որոշակի պարեր, որի պաաճառով նոր տեղիների անհրաժեշտություն է դրացվել: Հետագայում կաքավ տեղիներ գարծել է ընդհանրացված, հավաքական իմաստ կրող տեղիներ, որի տակ մտել են և այն պարերը, որոնք կատարվել են սահուն պարաքայլերով: Հայկական Շօրօր պարի կապը կաքավելով²¹ հեա լավ բացատրում է սորօր տալ անբանի, որը բառացիորեն նշանակում է կաքավանրման ման դալ²²: Սորորալ նշանակում է շորորալ: Այսպես երկու բառերն էլ իրենց նշանակությամբ նույնն են և շորորալ կամ սորորալ նշանակում է շորորվել, քայլել ոտքից ութ օրորվելով:

Այսանդից հետևում է, որ հնում տոտեմական պարային դործողությունները պաքավող կաքավ թուղնի պաավին անդ են ունեցել առտեմի նմանողական թուղներով: Այդ ժամանակ մյուս թուղունների ու տոտեմ կենդանիների սահուն շարժումներն արահայտելու համար ուրիշ տեղիների անհրաժեշտություն է դրացվել: Այսպես ծնվել է

¹⁸ Ալաստան՝ Հ. Մաժուրյան:

¹⁹ Կարծախ՝ Վ. Տեր-Մինասյան:

²⁰ Շօրօր-ների մասին տե՛ս Մերուժի Լիսիգյանի նշվ. աշխ., հ. 1, գլուխ V, էջ 239:

²¹ Կա Սորօրիկ անունով մի թուղն, որը Մտ. Մալխասյանը բացատրում է այսպես՝ Սորորիկ—անորոշ ցեղի թուղն (գուցե կաքավ), ՄՀԲԲ, հ. V, էջ 244:

²² Սորոր տալ—կաքավանման ման դալ, Գ. Ալվեբեգյան, Հայ աշուղներ, Թիֆլիս, 1903, էջ 524:

նոր՝ Ծօրօր անվանումը, որից մյուս պարերը տարբերվել են պար կտա՝ խաղ տերմինով: Ջավախքում Ծօրօրան է պարերը շատ են հեռացել իրենց նախկին բովանդակությունից: Այդ է պատճառը, որ պահպանված, հանդիսավոր, շուտ ու մոտ գալով կամ շորորվելով պարաքայլերի միջոցով նրանց բովանդակությունն ու նպատակը որոշելն այժմ դժվար է:

Ծօրօրան է պարերը հաճախ կրում են հենց պարաձևի անունը: Ջավախքում պարերը կոչվում են նաև ձօշ, ձօն, ձօշի անուններով, որոնք առաջիորդ են նշանակում են շորորալ, օրորալ, ճոճվել:

Ալաստանցի Հ. Մածուրյանը Ծօրօրը բնութագրում էր այսպես՝

Հնուք է, Արզրումա գալած պար է: Էսիգ մէնք Քրդական Ծօրօր կըսէնք, հըմը հայէրուս պարն է, մէնք կըխաղայինք: Թէ քրդեր խաղային, խօսկէր հայի լիզվով կըսէինք:

Վեպյուժյունն ապացուցում է, որ պարը հին է և տեքստ է ունեցել: Վեպյուն է և այն, որ պարերը վաղուց կորցրել են իրենց տեքստերը, կատարման տեղի ու ժամանակի հետ կապված հատուկ նշանակությունը: Միայն հարսանիքներին ու բարեկենդանին պարտադիր կատարելու ավանդըն է, որ հաստատում է պարերի տոտեմական լինելու արմատը:

Ծօրօրը միշտ կատարել են փակ շրջանով, անկախ պարողների թվից: Հնում կատարել են միայն մեծահասակներն ու միշտ հասակները, տղամարդիկ ու կանայք՝ խառը: Հնում պարել են միայն երդելով, իսկ այժմ դուռնա դհուղով:

Ծօրօրը գրանցել եմ Ախալքալաքի շրջանի՝ Մալկա, Գանձա, Մ. ու Փ. Խանչալի, Մ. ու Փ. Սամսարներ, Ալաստան, Ախալցխայի շրջանի՝ Վալե, Մուլըուտ, Սուֆլիս և ուրիշ գյուղերում: Վեպյուժյունները շատ են: Մ. Սամսարում գրանցած Ծօրօր-ում ձեռքերը բռնում են ճկույթներով, արմունկները սուր անկյամբ դեպի վեր ծալած, արմունկները դոտու, դաստակները՝ ուսերի մակարդակին: Պարում են խառը: Տեմպն արագ է, ուրիշ հավասար: Պարեղանակը $\frac{1}{2}$ է: Պարային ֆիգուրան զրադեցնում է ութ երաժշտական տակա: Ամեն մի քայլը անում է մեկ տասնվեցերորդական նոտա և մեկ աասնվեցերորդական զադար Բ՝:

Պարային ֆիգուրան այսպիսին է՝

- 1-ին՝ աջ թաթով քայլ դեպի աջ, երկրորդ դիրքով.
2-ին՝ ձախը խաղացնել օդում, մի փոքր առաջ, դետնից քիչ բարձրացնելով.

3-ին՝ ձախով քայլ-միացում աջին.

4-ին՝ աջ ոտքը խաղացնել այնպես, ինչպես ձախը 2-ին.

5-ին՝ աջ թաթով քայլ դեպի աջ, երկրորդ դիրքով.

6-ին՝ ձախը խաղացնել օդում, մի փոքր առաջ, դետնից քիչ բարձրացնելով.

7-ին՝ ձախ թաթով դարկել աջի մատներին մոտ.

8-ին՝ ձախ, զարկած ոտքը դետնի վրա սահեցնելով մինչև վերջին հնարավոր կետը, բարձրացնել վեր (ծունկը ձգելով) մինչև սրունքի մակարդակը.

9-ին՝ խաղացրած ձախ թաթով քայլ-միացում.

10-ին՝ աջ ոտքը խաղացնել, դետնից քիչ բարձրացնելով.

11-ին՝ աջ թաթով քայլ դեպի աջ, երկրորդ դիրքով.

12-ին՝ կրկնել 2-ի ոտք խաղացնելը.


13-ին՝ ձախով քայլ-միացում.

14-ին՝ կրկնել 2-ի ոտք խաղացնելը.

15-ին՝ կրկնել 7-ի ոտք դարկելը.

16-ին՝ կրկնել 8-ի ոտք խաղացնելը.

Պարի բոլոր հաշիվներին, բացի 7, 8, 15, 16

հաշիվներին, կատարել երեք ծունկկոտրուկ 

Բացի 7, 8, 15 և 16 հաշիվներին մնացած կենտ հաշիվներին իրանը շրջել դեպի աջ, զույգ հաշիվներին դեպի ձախ 45°, այսինքն՝ շորորալ, 7, 8, 15 և 16 հաշիվներին ուսերն ու իրանը մի փոքր թեքել ետ:

Ալաստանում Հ. Մածուրյանից դրանցած Ծօրօրը երկուս գնալ, երկուս դառնալ է, ոտ դարկելով: 4 և 8 հաշիվներին ոտքը թեքել դարկում են. մնացած կենտ հաշիվներին շրջվում են դեպի աջ, զույգերին դեպի ձախ 45°-ով: Ձեռքերի բռնակաձևը նույնն է, միայն այստեղ բոլոր հաշիվներին կատարում են վեր ու վար ճոճում. ծունկկոտրուկները նույնն են: Մ. Սամսարի մեկ ուրիշ տարբերակում ծունկկոտրուկները երկուսն են և կատարում են կենտ հաշիվներին դեպի աջ 15° շրջվելով, երկու ոտքերի ծնկները իրար սեղմած, իսկ զույգ հաշիվներին նույն ձևով դեպի ձախ շրջված:

Ալաստանում Ե. Դարբինյանը նույն ձևով պարում էր Փափուտի պարը, որի ժամանակ տեմպն աստիճանաբար արագացնում էր: Այսպիսի տեմպով պարերին ավելի ճիշտ ապլիս են ձօշ, ձօշ, կամ ձօշ անունը: Ախալքալաքի շրջանում հայանի դուռնաչի Սամսարցի Աբուլթն ասում էր՝ Ծօրօր օր ֆիշըմ առագ չալէնք կըլնի ձօշ: Այս նշանակում է, որ մօշվը պարում են ավելի արագ տեմ-

պով, Այն սովի շատ է տարածված, քան Շոտ
անունը: Պարը դրանցիւ եմ Մ. ու Փ. Սամսարներ,
Մ. ու Փ. Խանչալի, Գանձա, Մուղրուա, Մղալթ-
բիւ գյուղերում: Պարածէն հիմնականում երկուս
դնու, երկուս դառնալ է, ոտ խաղացնելով:

Մղալթբիւայում ձօշկ պարում են ծանկ ծա-
լելով: Ձեռքերը բռնում են ափ-ափի, արմունկնե-
րը սուր տնկւամբ գեպի վեր ծալած, արմունկները
դոտու, դաստակները ուսերի մակարդակին: Բո-
լոր հաշիվներին ձեռքերը կատարում են վար ու
վեր ճոճում :

Պարի բոլոր տարրերակների համար եղանակը
մեկն է: Պարային ֆիգուրան առաջին մասում ու-
նի 6, իսկ երկրորդում՝ 8 հաշիվ: Յուրաքանչյուր
քայլ ղրաղեցնում է Ե՝, Մեղեղին $\frac{3}{4}$ և $\frac{3}{8}$ է: Պա-
րային ֆիգուրան այսպիսին է՝

1-ին՝ աջ թաթով քայլ դեպի աջ, երկրորդ դիրքով,
չըջվելով դեպի աջ 45°, բոլոր քայլերին թա-
թերը դնում են 45° թեքությամբ:

2-ին՝ ձախով քայլ-միացում:

3-ին՝ կրկնել մեկի քայլը:

4-ին՝ ձախի մատները խաղացնել աջի մատներին
մոտ:

5-ին՝ ձախով քայլ-միացում:

6-ին՝ աջ թաթով քայլ դեպի աջ, երկրորդ դիրքով:

7-ին՝ ձախով քայլ-միացում:

8-ին՝ աջ թաթի մասները խաղացնել ձախի մատ-
ների մոտ:

Բացի 4 և 8 հաշիվներից բոլոր հաշիվներում
կատարել երկու ծունկկառնուկ, իսկ 4 և 8 հաշիվ-
ներին ծալել և ուղղել ծունկը:

Այստեանում 2. Մածուրայից գրանցած աար-
րերակում նույն պարածէն թոխըներն են՝

1-ին թոխը դեպի աջ, աջ թաթին (jeté).

«և»-ին՝ թոխը դեպի աջ, երկու թաթերի մատ-
ներին:

2-ին՝ կրկնել թախը երկու թաթերի մատներին:

3, «և», 4 հաշիվներին կրկնել 1, «և», 2 հաշիվնե-
րի թոխըները:

5-ին՝ թոխը դեպի ձախ, գրեթե աեղում, ձախ թա-
թին:

«և», 6-ին՝ երկու թոխը աեղում, երկու թաթերի
մատներին (soutés).

7, «և», 8-ին՝ կրկնել 5, «և», 6-ի թոխըները:

Ամեն մի թոխը մեկ ծունկկառնուկով :

Բ. Վէր-Վէր

Վէր-Վէր կամ վէր-վէր պարերը խիստ տա-
րածված են Հայաստանում: Վէր-վէրը կազմվում
է երկուս գնալ, մեկ դառնալ և երկուս գնալ, եր-
կուս գառնալ պարածէներից: Ջավախքում հատ-
կապես վերջին ձևից, որովհետև շրջանին բնորոշ
է երկուս գնալ երկուս գառնալը: Վէր-վէր-ները
Ջավախքում գրեթե առաջին մաս շունեն, նայած
առաջին մի քանի պարային ֆիգուրա որպես հի-
շեցում կատարվում է դանդաղ տեմպով: Պարն
ունի արագ տեմպ, սովորաբար համարվում է մա-
ծորային՝ ուրախ, երբեմն նույնիսկ կատակային
պարածէ: Կատարվում է բարձր տրամագրույթյամբ
ու թոխըներով: Համարվում է տղամարդկանց
պար: Գրանցել եմ Ախալցխայի շրջանի Վալի բա-
նավանում: Ախալքալաքի շրջանի Խանդո, Մ. Սամ-
սար, Կարծախ ղյուղերում: Հիշատակություններ
ու վկայություններ²⁴ կան Գանձայից, Հեշտիայից
և Տիլիսկնայից: Պարում են ումուզ-ումուզի, էր-
գուս մէ դիւն, մէգըմ մէ դիւն, թուղդէլով²⁵:

Պատահում է, որ պարում են գոտկատեղերից
բռնած՝ փաթըռված կամ ափ-ափի արմունկները
դեպի վեր ծալած, այնպես որ դաստակներն հա-
վասարվեն դլխի մակարդակին: Բոլոր դեպքերում
աշխատում են ձեռքերն այնպես ամուր պահել,
որ պարի փակ շրջանը չքանդվի:

Պարային ֆիգուրան այսպիսին է՝

1-ին՝ թոխը դեպի աջ, աջ թաթին երկրորդ դիրքով:

2-ին՝ թոխը դեպի աջ, ձախ թաթին (խալածէ).

3-ին՝ թոխը դեպի աջ, աջ թաթին:

4-ին՝ թոխը դեպի աջ, ձախ թաթին (խալածէ).

ոմանք այս հաշվում թոխելու փոխարեն նըս-
տում են մատները վրտ, ձախ ծունկը դեպի
ներս թեքելով խփում դետին:

5-ին՝ կրկնել 4-ի թոխը:

6-ին՝ կրկնել 3-ի թոխը:

7-ին՝ կրկնել 4-ի թոխը:

8-ին՝ թոխը դեպի աջ, աջ թաթին:

Գարեդին Լեոնյանը Վէր-վէր պարի մասին
գրում է՝

Շուրջպարը աչքի է ընկնում իր տեմպով, մեծ
շարժունությամբ, ղսպված սկսելով Allagro vi-
vace-ի մեջ, նա հետդհետե հասնում է scharran-

²³ Վէր-վէր-ների մասին տե՛ս Մրբունի Լիսիյան, նշվ.
աշխ., հ. I, գլուխ V, էջ 263:

²⁴ Վէր-վէրի մասին, որպես հարսանեկան պարի վկայում
է B. H. Акимов, Свадебные обычаи Ахалцыхских армян,
М., 1889, стр. 13.

²⁵ Կարծախ՝ Վ. Տեր-Մինասյան:

do-ի մեծ թափի կայտառության և վերջանում է էսքտազի հասնող ուժգին շարժումներով²⁶։

Թուշիով պարերը Ջավախքում համարվում են բոնոցի-ներ, թուշի լաոից։ Թուշի, թուշուտել, թրու-վալ լաոերը ունեն միևնույն թրա արմատը։ Հայե-րեն արմատական բառարանում թիռ, թիր, թէր²⁷, նշանակում է թուշի թևեր, ծառի ճյուղ, անբև կամ որևէ բույս, ջրային կենդանիների կամ թռչունների թև, ապա և մարդկանց հագուստների թևեր, սկսած ուսերից մինչև դաստակները։ Թև նշանակում է և մարդկանց աչ ու ձախ կողմերը և թևերը։ Թուշի և թև բառերը լրացնում են մեկը մյուսին։

Վլէր-վլէր-ները Ծօրօր պարածների հետ միա-սին պետք է որ կապ ունենային թռչուն նախնի-ների պաշտամունքի հետ, մասնավորապես կա-քավների հետ։ Այդ պարերը կապվում են նաև կենդանական ու բուսական տշխարհի, ապա և մարդկանց թևերի հետ, որոնցով դիտավորապես կատարվում էին հմայական ու կախարդական շաա գործողություններ։

Եթե ուշադրություն դարձնենք Վլէր-վլէր ան-վանը, ապա ինքնին պարզ կդառնա պարի նպա-տակը, որովհետև Վլէր-վլէր նշանակում է դեպի վեր շարժումներ, թռիչքներ, բարձր-բարձր, Բառա-րաններում Վլէր-վլէր ընկնել, նշանակում է վեր-վեր թռչել, միաժամանակ ուրախանալ, թուշուտել, պարել։ Վեր արմատով ածանցված վերանալ բա-ռը նշանակում է ձգանել դեպի վեր, բարձրանալ, աճել ու բողբոսանալ։

Թուշիներով պարերի ղեկավարները կոչվել են վլէրվլէրիչներ և բոլորին օրինակ են ծառայել իրենց բարձր թռիչքներով։ Ով ավելի բարձր թռչեր, նա կհամարվեր ամենալավ կախարդը՝ երիասարդ սերնդի կենդանական ու բուսական աշխարհի աճի ու բողբոսման հմայության գործում։ Թուշիները կապված են հասակի բարձրացման, բուսական աշխարհի աճի, ապա և պտղաբերու-թյան հմայության հետ։

Թուշիներով պարածները արտահայտում են մարդկանց, կենդանիների ու թռչունների ներքին ուրախ՝ մաժուրային կենսուրախ արամագրություն-նր։ Հայկական շաա պարածներում թուշիներով պարերը հնապանդում են մարդկանց, կենդանի-ների, թռչունների ու բուսականության աճն «ա-պահովելու» հմայական նպատակներ։

Գ. ՔՕԶԱՐԻ

Հայաստանի անասնապահական շրջաններում հնուց սովորություն է եղել ամռանը արոտավա-րեր տեղափոխվելու։ Յայլանէր քաղելու սովորու-թյունը պահպանվել է ցորա²⁸։ Անասնապահական այս անհրաժեշտ սովորության հետ է կապված Քօշարի պարը։ Այն կապվում է ինչևի բառի հետ, որը նշանակում է թափառել, հսկայական տա-րածություններ անցնել, նոր արոտավայրեր որս-նել։

